ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/166

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20058-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 30.10.2018թ. թիվ 7/03/2/13107-18 գրության հիման վրա, 03.11.2018թ. թիվ 27/26-3/20058-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/166 ընթացակարգի շրջանակներում 08.11.2018թ. ժամը 10:30-ին և 12.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.10.2018թ. թիվ 7/03/2/13107-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 07.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/48-3» ծածկագրով պայմանագիրը «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու (մատակարարումներ չիրականացնելու) հիմքով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից միակողմանի լուծվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/166 ընթացակարգի շրջանակներում 08.11.2018թ. ժամը 10:30-ին և 12.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2018/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2018/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 07.06.2018թ. կնքվել է հանդերձանքի մատակարարման թիվ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/48-3» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ.

2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով հանդերձանք:

2. Ընկերությանն ուղղված 29.10.2018թ. թիվ 7/03/2/[356987]-18 գրությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20058-18 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 30.10.2018թ. թիվ 7/03/2/13107-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 07.06.2018թ. կնքվել է հանդերձանքի մատակարարման թիվ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/48-3» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել 300 հատ «հատուկ հանդերձանք և պարագաներ (ամենօրյա

համազգեստի լրակազմ)» և 300 հատ «Գլխարկով բաճկոններ (ձմեռային բաճկոն)» ապրանքները:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ընկերությանն ուղղված 29.10.2018թ. թիվ 7/03/2/[356987]-18 գրությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն իր և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև 07.06.2018թ. կնքված պայմանագրի հիման վրա պարտավորվել է 2018թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով հանդերձանք: Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից, համաձայն գործում առկա նյութերի, Պայմանագրի հիման վրա մատակարարում ընդհանրապես չի իրականացվել:

Արձանագրում եմ, որ Ընկերության կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտում, որի հետևանքով Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա հիմքերն, արձանագրում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը: Հետևաբար գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20058-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**